ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

N 03 -Ա

ք.Արտաշատ

„07„ դեկտեմբեր 2026թ.

«Ա.Բ.Ա ՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավարի 03.12.2025 թ. թիվ Ե-6002 գրությունը՝

**ՊԱՐԶԵՑԻ**

2025 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմը ստացել է Արտաշատ համայնքի ղեկավարի 03.12.2025 թ. թիվ Ե-6002 գրությունը՝ համաձայն որի՝ համայնքի տարածքում հայտնաբերվել է գովազդային վահանակի տեղադրման դեպք՝ առանց համայնքի ղեկավարի թույլտվության, ինչի առիթով համայնքապետարանի աշխատակիցների կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն:

09.12.2025 թ. Արարատի մարզպետի կողմից «Ա.Բ.Ա ՖԱՐՄ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ տնօրեն Արմեն Բաղեյանին փոստային եղանակով ուղարկվել է ծանուցագիր, որով վերջինիս առաջարկվել է ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված խախտումը: Ծանուցագրի ստացման ետադարձ կտրոնի համաձայն Ա. Բաղեյանը ծանուցագիրը ստացել է 12.12.2025 թ.-ին:

24.12.2025 թ. Արարատի մարզպետի կողմից գրություն է առաքվել Արտաշատ համայնքի ղեկավարին՝ խնդրելով հայտնել՝ արդյո՞ք Ընկերության կողմից գովազդի թույլտվության համար դիմում ներկայացվել է կամ խախտումը վերացնելու ուղղությամբ այլ միջոցներ ձեռնարկվել են,

է, որ Ընկերության կողմից գովազդի մասին դիմում չի ներկայացվել կամ խախտումը վերացնելու ուղղությամբ այլ միջոցներ չեն ձեռնարկվել:

Համաձայն «Գովազդի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինն իրավասու է, համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության, տուգանք կիրառել գովազդատուի, գովազդ արտադրողի, գովազդակրի նկատմամբ գովազդային օրենսդրության խախտման մասին **իր ծանուցագրերի պահանջների կատարումից խուսափելու կամ ժամանակին չկատարելու համար**»:

Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 917 որոշման 1-ին մասի՝ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն արտաքին գովազդի մասով Հայաստանի Հանրապետության մարզերում վերապահված է մարզպետներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ Ընկերության տնօրենը Արարատի մարզպետի ծանուցագրի պահանջները չկատարելով ցուցաբերել է անգործություն, այդ կերպ թույլ տալով առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 917 որոշման 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «Ա.Բ.Ա ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմեն Բաղեյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Արմեն Բաղեյանին:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ